

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ Գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԻՍԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ի Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզիպոսի համար տեղից, ողջ դճ. 80
» » վեցամսեայ » 50
Օգար Երկիրներ տարեկան Գրանք 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ՀԵՐՔՈՒՄԻ ՍԸ ԱՌԹԻԻ

Սրտի անհուն թեթեւացումով մը տեսանք
Թանկի մէջ — ու կը փութանք հաղորդել մեր
այն ընթերցողներուն որոնք եւրոպական թերթ
չեն կարդար — Պոլսէն պաշտօնական աղբիւրէ
քաջուած հեռագիր մը որ կը հերքէ չորս հայե-
րու կեանքին վերջ տրուած ըլլալը :

Կ. Պոլիս, 17 Սեպտ. — «Տէյի Մեսեն-
ճեր»-ի հրատարակած այն լուրը, զոր արտա-
սպած էին ուրիշ օգար քերթեր, իբր թէ չորս
հայ բանաստեղծներու վրայ մահու պատիժը
գործադրուած ըլլայ, առէ է :

Կը սիրենք հաւատալ թէ ճիշդ է այս
հերքումը և թէ օգոստոս 6/18-ի դէպքին առ-
թիւ դատաւարութեամբ հայերուն նկատմամբ
անօրինուած խտրադոյն պատիժը չի գործա-
դրուիր . ի՞նչ էր արդէն անոնց մեղքը, քանի՞
հոգիի մահուան պատճառ եղան . բարապան
մը միայն, Պապը Ալիի պայթման հետեւանօք
մեռած էր . մէկի փոխարէն ո՞ւր հոգի, ա-
ռանց հայուերու բանտարկուածներն ու ար-
տուրուածները, երբ անդին՝ Թաթարի մէջ այն-
քան անմեղ ու անգիտ հայերու ջարդը կազ-
մակերպող ոճրագործներ անպատիժ մնային,
ու մահուան դատաւարութեամբ տառնելու
պարագլուխներ Սամսոնէն նաւ գրուեցան
ծովային հանգարտիկ ուղեւորութեամբ մը
փոխադրուելու համար չգիտցուիր ո՞ր :

Բայց մեր նպատակը, այս վայրկեանս,
բազմաթիւն մը դնել չէ այն աղէտներուն
միջեւ որոնք քաղաքական հանգամանք ստա-
նալով՝ թեթեւ կամ ծանր ցոյց կը տրուին փո-
խադարձաբար . դիւանագէտներու ձեռնհա-
սութեան պատկանող խնդիր մըն է այս որուն
մէջ արդարութիւնը ոչ կամ կանուխ երեւան
պիտի ելլէ : Ինչ որ մեր համեստ սահմանին
կը պատկանի, հայ յեղափոխութիւնը վա-
րդներուն ուղղելի կոչում մըն է, այս սիւ-
փարար հերքումին առթիւ, որպէս զի այլ
եւս խրատուելով այս տխուր փորձառութիւն-
ներէն, մեղմացունեն իրենց ծայրայեղ եռան-
դը ու հրաժարին գործելու այն միջոցներէն
որոնք ոչ միայն թուրք կառավարութեան ու
ժողովուրդին ատելութիւնը կը հրաւիրեն բո-
լոր հայերուն դէմ, այլ և եւրոպայի անտար-
բերութիւնը և մինչեւ իսկ հակակրօնք :

Թողլով ազգային թերթերու մեծագոյն
մասը, — աղատ երկիրներու մէջ հրատարակ-

ուածները բնականաբար, քանի որ Պոլսոյ թեր-
թերը իրենց կարծիքին տէրը չեն կրնար ըլլալ —
եւրոպական ամենէն լուրջ, անկախ, և նոյն
իսկ հայկական դատին համակիր մամուլը իսկ
դաւանացած ոճով մը գրեց ուսման և ուժա-
նակին գործածման դէմ, ցոյցին ու յարձա-
կումին (attentat) դէմ . միապետական ու հան-
րապետական կառավարութիւններ հաւասա-
րապէս զայրոյթ գգացին : Ո՞ր է ուրեմն ձեռք
բերուած օգուտը :

Ռուս կառավարութիւնը կը յայտարարէ
աւտօրիթ թէ ինք ձեռք պիտի առնէ Թուր-
քիոյ քրիստոնեայներուն նկատմամբ խտրաց-
ուած բարենորոգումներուն գործադրութեան
հարցը, բայց ո՞չ բնաւ յեղափոխական ա-
րարքները քաջալերելով կամ անոնց համակ-
րելով : Անդին, Փրանսայի մէջ, քանի մը հա-
րիւր նշանաւոր անձնաւորութիւններ նախա-
րարութեան ուշադրութիւնը կը հրաւիրեն Հա-
յաստանի ժողովուրդին անպաշտպան ու վը-
տանդալից կացութեան վրայ . այդ հանրա-
գիրն ստորագրող քաղաքագէտները, եկե-
ղեցականները, երեսփոխանները, գրագէտ
ները տինամիթի փորձերէ և ցոյցերէ չէր
որ ներշնչուեցան ապահովապէս . մարդա-
սիրական զգացում մըն էր որ կը մղէր զիրենք :

Որչափ աւելի շրջահայեաց ըլլանք, որ-
չափ աւելի լուրջ կերպով խորհիրք մեր կա-
ցութեան վրայ, այնքան աւելի արժանի կը
դաւանանք եւրոպայի հոգածութեան ու կա-
րեկցութեան : Ազգութեան գաղափարին դէմ
մղաղնել, «կենաց, ընչից ու պատուոյ ապա-
հովութիւն» խնդրելէ հրաժարել չի նշանակեր,
— ինչպէս մտածողներ ու հռչակողներ կան, —
տինամիթէն ու ցոյցէն հրաժարելը :

Չի խաբենք ինքզինքնիս . եթէ չենք մեղ-
քընար այն հաշարուոր հայերը որոնք աշխար-
հի ամեն կողմը թափառական, հաշտութեան
ու խաղաղութեան նշոյլի մը կը սպասէին իրենց
տեղերը վերադառնալու համար, գոնէ գլխաւոր
այն անձնուէր երիտասարդներուն վրայ որոնք
ծնողքը, ընտանիքը, ապագայ և կեանք առ ո-
չինչ գրելով՝ կերթան կը նետուին փորձի մը
մէջ ուսկից քաղած մեծագոյն օգուտներն կը-
լայ կախաղանէն կամ ցիցէն փրկուելնին . մա-
հը այնքան մօտէն տեսնելէ ետք՝ այդ հայ-
րենասէր բայց մոլորուած տղաքները գերա-
գոյն երջանկութիւնը կը սեպեն իրենց համար՝
աքսորը ու չլթայակապ բանտարկութիւնը :

Այս անգամուան դաւն փորձը գոնէ
խրատ մը ըլլար՝ նոր զհեր չի պատրաստելու :

ՄԷԿԷՆ Ի ՄԷԿ ՀԱՐՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՈՅՐ

Կատարեմէ կողմի. կողմէ՞ր տասը հազար ոսկի
չափ (անգլիական), տասը հինգ օրուան մէջ :

— Սուտա՞ն երթանք, պիտի հարցնէք հիսա
կատարածոտ նայուածքով մը :

Չէ. տեղերնէք երեւոյրու պէտք չունիր : Ոսկի-
ները պիտի գտն ձեզ գտնեն անգլիական պանքային
վրայ քաջուած չե՞ն մը կերպարանքով :

Կը թերահաւատիք, ո՞վ նոր թովմա Առաք-
եալներ, և շօշափել կողմի. քանիները, հաւատալու
համար ըսածիս :

Լաւ ուրեմն չօշափեցէ՛ք . . . տասը հինգ օր
ետորք : Այսինքն այնչափ ժամանակ սրչափ պէտք է
նամակ մը դրելու Լոնտոն և ստակոյ տանելու համար :
Հիսա խաղաղութեմ խնդրիր :

Կարծես նստած տեղէս կը տեսնեմ՝ այն անյազ
ոճապարանքը որով կը լսուիք այս տողերս, ձեր
սրտին բաբախումները չկարենալով զսպել :

Ո՞վ ամբարշտ տակալ քաղցի ինչպէս կրնէ Ու-
րասիոս : (Չարմանալի՞ բան, Ուրասիոս ալ ուրիշ՝
միտքս ինչու այս միջոցին և պատճառ եղաւ որ
քանի մը բողբէ եւս սպասեմ ձեր համբերութիւնը :)

Լոնտոնէն ստացայ անգլիական գրութեմ չըջա-
րեւական մը՝ Տապը հազար ոսկի վարձարեւելի
վերնագրով : Այդ շրջաբերականը կը պարունակէր
տասը հարցում և ամէն մէկ հարցման պատասխանը
տուողին հազար ոսկի պարգեւ կը խառնուէր :

Ահա՛ այդ հարցարանին խաղաղութիւնը :

1. Հազար ոսկի պիտի տրուի այն մարդուն որ
Ս. Գրքէն առաջ բերէ բնագիր մը ապացուցանող
թէ պարտաւոր ենք ազգութեւ կոյս Մարիամին :

2. Հազար ոսկի պիտի տրուի այն մարդուն որ
առաջ բերէ բնագիր մը ապացուցանող թէ Տիրիւմ սե-
ղանին վրայ կրօնաւորները միայն պիտի խմեն գինին :

3. Հազար ոսկի պիտի տրուի այն մարդուն որ
առաջ բերէ բնագիր մը ապացուցանող թէ Ս. Պետ-
րոս կին չունէր :

4. Հազար ոսկի պիտի տրուի այն մարդուն որ
առաջ բերէ բնագիր մը ապացուցանող թէ կրօնա-
ւորները ամուսնանալու չեն :

5. Հազար ոսկի պիտի տրուի այն մարդուն
որ առաջ բերէ բնագիր մը ապացուցանող թէ պար-
տաւոր ենք ազգութեւ մեռնողին համար :

6. Հազար ոսկի պիտի տրուի այն մարդուն որ
առաջ բերէ բնագիր մը ապացուցանող թէ մէկէ ա-
ւելի միջնորդներ կան մարդոց և Աստուծոյ միջեւ :

7. Հազար ոսկի պիտի տրուի այն մարդուն որ
առաջ բերէ բնագիր մը ապացուցանող թէ Ս. Պետ-
րոս Հռոմի եպիսկոպոս էր :

8. Հազար ոսկի պիտի տրուի այն մարդուն որ
առաջ բերէ բնագիր մը ապացուցանող թէ կոյս Մա-
րիամ՝ կրնայ փրկել մեզ :

9. Հազար ոսկի պիտի տրուի այն մարդուն որ
առաջ բերէ բնագիր մը ապացուցանող թէ Հռոմի
եկեղեցին ամենէն հին եկեղեցին է :

10. Հազար ոսկի պիտի տրուի այն մարդուն որ
պաշտ բերէ բնագիր մը ապացուցանող թէ Հռոմի
Պապը Քրիստոսի փոխանորդն է կամ Ս. Պիտրոսի
յաջորդը :

ԸՆԴ ԱՄԷՆԸ ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ՈՍԿԻ ՊԻՏԻ
ՏՐՈՒԻ անոր որ առաջ բերէ Ս. Գրքէն խնդրուած
բնագիրները :

Բողոքական Հարուստ Հաստատութիւն մըն է որ այս Հարցումները կուղղէ : Պատասխանները պէտք է յղել հետեւեալ հասցէին :

John Kensit
City Protestant Book Depot
18, Paternoster Rood E. C.
London

* * *

Կը տեսնէ՞ք որչափ դիւրին է այդ ոսկինքը գտնելը, պարզապէս մէկ-երկու օրուան աշխատանք: Պէտք է Նոր Կտակարանը թղթատել և ամէն մէկ հարցման առջեւ բնագիրներ ցոյց տալ, առաջ քե-
րելով միայն գլուխները և համարները, զոր օրինակ՝ տե՛ս Մատթ. ԺԲ. 16, կամ տե՛ս Մարկ. Զ. 21 և Նն:

Կը զգամ որ տակաւին կրակածի պէս բան մը կը ծլի ձեր մտքին մէջ և կուզէք իմանալ որ եթէ այդչափ դիւրին է այդ տասը հազար ոսկինքը գտնելը, ինչո՞ւ էս չեմ պատասխանած անմիջապէս:

Այո՛, այդ կէտը անբացատրելի կերեւայ և կը փախաբիւ մամն բան ըսել ձեզ, որպէսզի ցրտին ձեր յետին կրակածները :

Եթէ ամիս մը առաջ ստացած ըլլայի այդ շքե-
շարերականը, վստահ եղիք, առանց ձեզի բան մը ըսելու ես կը գտնեմքի ստակը: Բայց ամիսէ մը ի վեր արմատապէս բարեփոխուած է դրամական կացու-
թիւնն և այսօր այնպիսի վիճակ մը ունիմ որ տասը հազար ոսկի չափելու համար երկու օր աշխատելու ձանձրոյթէն կրնամ պահպանել ինքզինքս :

Քանի մը ամիսներ առաջ, օր մը, յանկարծ լուսաւոր գաղափար մը ունեցայ. և միթէ կարելի՞ է լուսաւոր գաղափարներ չունենալ Եգիպտոսի այս մշտապայծառ երկրին տակ: Այդ լուսաւոր գաղա-
փարն էր արտօնութիւն խնդրել Եգիպտոսի կառա-
վարութենէն՝ Կիզէի բուրգերը և Սփինքսը Բարիզ փոխադրելու 1900ի ցուցահանդէսին: Խնդրագիրը զոր անմիջապէս մատուցի առ Ներքին գործոց պաշտո-
նէութիւնն, իր տեսակին մէջ մաքիավերական գրու-
թիւն մըն էր :

Բայրովին լուսեթեամբ անցնելով սոյն ձեռնար-
կութեան ինծի տալիք նիւթական չահերուն վրայէն, մասնաւորապէս շէշուեցի այն քաղաքական կարեւո-
րութիւնը և առաւելութիւնները զորս Եգիպտոսի պի-
տի վայելէր բուրգերուն Բարիզ փոխադրութեան առ-
թիւն : «Մտածեցէ՛ք անգամ մը, ըսած էի խնդրագ-
րիս մէջ, այն ահագին յաջողութեան զոր պիտի ու-
նենայ Մուսթաֆա Քամէլ, երբ Շամ քը Մարսի մէջ Խէդրի բուրգին գաղաթէն» (142 մէթր բարձրու-
թեամբ) աշխարհի ամեն կողմերէ Բարիզ ժողովուած
միլիոնաւոր բազմութեան մը առջեւ, խօսի իր հայ-
րենաշունչ կամ հայրենասիրաշունչ ճառերէն մէկը »:

Զեմ գիտեր թէ խնդրագրիս մաքիավերական գրութեան թէ Լորտ Գրոմբրի բացակայութիւնը և կամ երկուքը մէկէն, նպատակներն ինծի : Ճշմարտու-
թիւնը այս է որ չարաթ մը ետք արտօնութիւնը, իր ամեն կանոնական ձեւակերպութիւններով, շնորհ-
ուած էր ինծի :

Թէեւ ամենայն գաղտնասիրութեամբ կատար-
ուած էին այս գործողութիւնները, սակայն չեմ գի-
տեր ինչպէս Քուքի գործակալութիւնը իմացած էր իրողութիւնը: Կերեակալցէ՞ք յուզուած այդ աշխար-
հածանօթ տան մէջ: Բուրգերու տեղափոխութիւնը, նոյն իսկ առժամապէս, կրնար մեծամեծ փնտնեք պատճառել իրեն, կէս առ կէս գեղջելով Եգիպտոս եկող զբոսաշրջիկներու թիւը: Հետեւաբար Քուքի գործակալութիւնը միաբանած Շէքրատ Օթէլի և Կէզլիթ Բալէսի տնօրէնութիւններուն հետ, ամէն միջոց գործածեց ջնջել տալու համար ձեռք բերած արտօնագիրս (չեմ մեղադրեք զիրենք, հացի խնդիր է, ո՞վ կրնայ բան մը ըսել): Սակայն, ափսո՛ս ի-
րենց համար, բանը բանէն անցած էր արդէն, ինչ-
պէս կը տեսնուի: Ես այդ միջոցին արտօնութիւնն ծա-
խած էի ամերիկեան ընկերութեան մը վեց միլիոն տոլարի: Եթէ ամերիկացիներն պէտքեր չունենայի եւ կարենայի տակաւին սպասել, զուցէ լուսագոյն պայ-
մաններով ծախէի արտօնագիրս, սակայն դերձակիս ու կօչկակարիս ձայները սկսած էին լսուիլ այդ բուր-
գերու գաղաթէն՝ ուրիշ բառսուն դարբեր և ըն... մը-
նայածը գիտէք:

Եւ որչափ ճշմարիտ է թէ՛ յաջողութիւն մը առանձին չի դար: Շարաթ մը առաջ Նիւ-Եորքէն ստացայ նամակ մը որով ձէ՛յ Կուլտի թոռներէն մէկը, Միս Ալիս Կուլտ, բառերովու տարեկան պաշ-

տելի խարտիչագեղ աղջիկ մը(1), ամենայն պարզ-
մտութեամբ կատաղաբերէր ամուսնանալ հետս: Նա-
մակին տակ յետ գրութեամբ մը իմաց կուտար թէ իր օժիտը կը հասնէր եօթը միլիոն տոլարի: Հեռա-
գրով պատասխանեցի թէ կ'ընդունիմ իր առաջարկը:

Աւելի իբրեւ հետաքրքրական պարագայ մը, քան թէ ինծի համար իբրեւ փառքի տոտոյս մը, սա եւս աւելցնեմ թէ օր չանցնիր որ ամերիկեան կամ եւ-
րոպական պատկերազարդ թերթերու կողմէ նա-
մակներ շտապանամ, որոնք լուսանկարս կուզեն ինչ-
կենսագրական տեղեկութիւններով հանդերձ: Նիւ-
քո հրատարակուած թերթ մը նոյն իսկ մտապածին կենսագրական մը գրած է վրաս, որուն մէջ կը ջա-
նայ ցոյց տալ թէ ամերիկեան ծագում մը ունեցած եմ: Իբր թէ մեծ-հայրս Միսայեալ-Նահանգներու Բէյլու քաղքին մէջ ծնած է եղեր և հոն ժամապ-
նի և ստիպտի առեւտուրով կը զբաղի եղեր, Վա-
շինկթոնի նախագահութեան ժամանակ: Փարոսի մի-
ջոցաւ կուզեմ հերքել այդ ստացող տեղեկութիւն-
ները. հայ ծնած եմ և հայ պիտի ապրիմ մինչեւ ետքը: Տասներեք միլիոն տոլարի հարստութիւնը չէ որ ուրանալ պիտի տայ ինծի ազգութիւնս(2): Մեծ հայրս ո՛չ թէ Միսայեալ-Նահանգներու Բէյլու քաղ-
քին՝ այլ Փորը-Ասիոյ Բալու քաղքին մէջ ծնած է, իսկ իր գործն էր ո՛չ թէ ժամապնի ու ստիպտի վաճառականութիւն, այլ բոստորմայի և սուճուխի:

Իմ անունիս շուրջը եղած այս աղմուկէն ետքը շատ բնական երեւցաւ ինծի երբ նամակ մըն ալ Գահիրէի լուսանկարչական հանրածախնօթ տան պետ Տիար Լէքէճեանէ ստացայ, որով արտօնու-
թիւն կուզէր ինչ լուսանկարէս յիշուն հազար օրի-
նակ հրատարակ հանել և վաճառելու, գոյանալիք շահը կէս առ կէս բաժնելու փափկանկատ առաջար-
կութեամբ: Վաղը հաստատական պատասխան պիտի տամ իրեն, շնորհակալութիւնս յայտնելով իր սիրա-
լիր նամակին համար և պիտի աւելցնեմ թէ ինծի ինկած շահարձինը կը յատկացնեմ բարեգործական հաստատութեան մը, որուն ընտրութիւնը կը թո-
ղում Փարոսի խմբագրութեան:

Հիմա որ ներկայ վիճակս իր մերկութեան մէջ (ոսկեհամու՛կ մերկութիւն) ներկայացուցի ձեզ, ան-
շուշտ դուք ալ համոզուեցաք թէ բնաւ չեմ կրնար տասը հազար անգլիական ոսկիի ջնջին գումարի մը համար ժամերով տքնիլ ու թուղթ մրտել:

ԺԻՐԱՅԻ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՌԳՐՈՅԻ

Թագական. — Մարմին մը որ որքան քիչ ունէ, այնքան քան կապի:

Գաղթականութիւն. — Մուրացկանութեան di-
lettantisme:

Կոյս. — Ածական մը որ Եգիպտոսի մէջ չի գործածուիր... անհաւանք չի գտնուելու համար:

Հաւատարմութիւն. — Շուներու առաքինու-
թիւնը, կիներու bête noire եւ արկղակալներու սկաւ կողմը:

Այլի. — Առանց փութի վարդ:

Լրագիր. — Բաժանորդներու յանուկ փորձաբար մը (pierre de touche):

Սէր. — Համաճարակ մը որմէ ամեն մարդ կու գի բռնուի:

ՌԱՏԱՄԵԼ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կը յիշուի թէ իբր երկու ամիս առաջ վէճ մը ծագած էր Զակաղիկի ազգայիններուն և խպտիններուն միջեւ՝ այս վերջիններուն կող-
մէ մեր գերեզմանատան հողին վրայ եղած ոտնձգութեան մը պատճառաւ: Առաջնորդա-
րանի դիւանատունէն մեղ հաղորդուած զեկոյ-
ցէ մը կը տեղեկանանք թէ խնդիրը կարգադ-
րութեան ճամբու մէջ է և մեր սեպհականու-

թեան իրաւունքը պաշտպանուած: Աւստիկ այդ զեկոյցը:

«Իպրահիմի-Շարգիլի ծանօթ ազգային Տիար Կրիզոր Թարագճեանի երկու նամակ-
ներէն Գաւառական վարչութեան Գաղաքական Ժողովը հասու եղած է թէ Զակաղիկի ֆէք-
քը զիմամի մէմուրը քարտէս ի ձեռին դա-
ցած է տեղւոյն ազգ. գերեզմանատունը և սահմանագծած է զայն. և թէեւ այս սահ-
մանագծէն դուրս մնացած է Խպտոց շինած և մեր ու անոնց միջեւ խնդրոյ առարկայ ե-
ղած դամբարանի տեղն, բայց կէս ֆէտտան, այսինքն հայ գերեզմանատան սկզբնական ամ-
բողջ տարածութիւնը անդամ մ'եւս ապահով-
ուած է հայոց:

«Ժողովը՝ սահմանաց մասին վերստին չփո-
թութիւն և անհամաձայնութիւն չծագելու համար՝ որոշեց գրել Զակաղիկի ազգայնոց որ վութեան ազգային գերեզմանատունը չըլա-
պատել, որու համար ժամանակին իրենց մէջ գումար մը հանգանակելու գովելի նախա-
ձեռնութիւնը ունեցած են: Միջոցներ ձեռք առնուած են՝ յիշեալ գերեզմանատան վերա-
բերեալ օրինական վաւերագրերն ի ձեռին ունենալ և պահել ազգային ուրիշ սեպհակա-
նութեանց վաւերագրերուն հետ»:

Գաղաքական Ժողովոյ անցեալ ուրբաթի նիստին մէջ տրուած որոշման համաձայն՝ հե-
տեւեալ շրջաբերականը կուղղուի 365 ազգայ-
նոց որոնք ազգ. տրոց մասնակցելու վիճակի մէջ կը գտնուին ի Գահիրէ և ի շրջակայս: Այս հաշուէն դուրս են Զակաղիկի, Թանթայի և Ասիութի ազգայինը որոնց մարդահամարի ցու-
ցակները տակաւին հասած չեն Առաջնորդա-
րան:

Մեծապատիւ սիրելի

Գաւառիս Պատկ. Ընդհանուր Ժողովը որոշած ըլլալով որ յետ այսու յանուն վարժարանի և տղ-
քատոց նուիրեալ և կտակեալ կալուածոց հասոյթ-
ներն ամբողջովին յատկանան վարժարանի և աղքա-
տաց, և նկատելով որ այս որոշում գործադրուած ժամանակ ազգային միւս պէտքերուն, մանաւանդ Ս. եկեղեցւոյ, որ բնաւ կալուած չունի, որոշած է նաեւ որ հասոյթի նոր աղբիւր մը ստեղծելու համար ազգային տուրք հաստատուի և այստեղ, ըստ տրու-
մագրութեան Ազգ. Սահմանադրութեան: Ազգ. տուր-
քը հիմ պիտի ըլլայ ընտրողական իրաւանց և բաժ-
նուած է չորս աստիճաններու. Ա. ըստ հաճոյս, Բ. 75, Գ. 50, Դ. 25 դուրուշ ողջ և պիտի գանձուի 25 տարին լրացնող այն արու ազգայիններէն որ բնիկ են, կամ ընտանեօք երեք և առանց ընտանիքի հինգ տարիէ ի վեր հոս հաստատուած են և տէր են վաստակի և շահու:

Այս որոշման գործադրութիւնը Պատ. Գաղա-
քական Ժողովոյ յանձնուած ըլլալով, ժողովն աղ-
գային տրոց բաշխման համար կազմած է յատուկ մասնախումբ մը, որ ձեզ համար որոշած է տարե-
կան... դուրուշ ողջ, որ կսկսի տարուոյս մայիս 1էն և վճարելի է միանուագ:

Հաղորդելով զայս ձեզ ըստ որոշման Պատ. Գաղաքական Ժողովոյ, լի եմ վստահութեամբ թէ Ձեր Մեծապատուութիւնը պիտի բարեհաճի վճարել ազգային տրոց իրեն համար սահմանեալ բաժինը, երբ հաւաքին ներկայանայ պաշտօնական ստացականն ի ձեռին:

Ողջունիւ սիրոյ և օրհնութեան

Միամ աղօթարար

Առաջ. Տեղապահ Հայոց Եգիպտոսի ՅԱԿՈԲ Ծ. Վ. ԱՇՈՏ

(1) Նամակին կցուած էր իր լուսանկարը:

(2) Կարծեմ մինչեւ հիմա չի գտնուած ինծի չափ հարուստ հայ մը որ այս լեզուն գործածէ:

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

Յունաստանի սագնապաշի վիճակի մը մասնուած է նորէն. մինչ Պոչտոյ մէջ «իւշեմայից ժողով» կը գումարուի՝ բոլոր մանկական հասարակութիւններուն զեկուցանելու համար հաշտութեան կնիքով, Աթենքի մէջ ժողովուրդը միթիկներ կը կազմէ ու հրապարակներու վրայ կայրէ հաշտութեան պայմանագրի օրինակները: Այս ներհակ ըզգացման արտայայտութիւնը բառական է ցոյց տալու երկու կողմին սպառնալիքները դեպքանախորհուրդի որոշումներէն: Թուրքիա գոն է, որովհետեւ հիմնականում թեաւայայտէն չի պիտի փաշտի. եւ Յունաստան դժգոհ՝ որովհետեւ իր գրեթէ բոլոր երեւոյթները փոխանակելու համար երկրին բաղդը. համակերպութեան յորդոր կարգադրներ ու պատերազմի վերսկսումը պահանջողներ պիտի քաջան իրենց բոլոր պերճախօսութիւնը: Վերջիններուն եռանդը մեղմացուցնելու նպատակով էր անցնուց Պ. Մուրադիեւ յայտարարեց Բեքրայուրի հեղինակ գործակատին թէ «երոպական համաձայնութիւնը իր գործը աւարտած ըլլալով» Եօկիոս բազալորին կը բողոք աշտուհեմ պատահելիք դէպքերուն բոլոր պատասխանատուութիւնը: Տեսակ մը սպառնալիք է գործընկեր Ռուսիոյ արտաքին գործոց նախարարը, մի եւ նոյն ատեն Պիդասոսի պէս ձեռքերը չըլարով:

Յունական մամուլին մէջ մաս մը կայ որ շաւազոյն կը սեպէ բոլորովին հրաժարիլ թեաւայայտէն՝ քան թէ անոր մէկ քանի կէտերը առաջիկային ձեռք անցունելու յոսով՝ երկրին երեւոյթները միջազգային փոխորդի ենթարկելը տալ իսկ մամուլին ու ժողովուրդին պատերազմասէր կոռակցութեան անձնատիրութիւնը կը գգուէ Սմոլենսքի զօրավարին յանկարծական կերպով Օջոս ուղեւորիլը, որուն նպատակը ծածուկ կը պահուի:

Այս բոլոր գրգռումներուն, վեճերուն, բողոքներուն մէջեղ, երկրին ճակատագիրը պիտի որոշէ հեղինակ խորհրդարանը որուն գումարումը պատմական նշանակութիւն մը պիտի ունենայ այս անգամ ու անձկութեամբ կը սպասուի երկուշաբթիի համար:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Քաղաքական լուրերու տեղ, որոնց սով կայ, կարգ մը ծովային ու ցամաքային աղէտներու լուրեր հաղորդեցին հեռագիրները վերջին երեք օրուան միջոցին: Գերմանական թորփիլակիր մը փոթորիկի բռնուելով Գիւքահալէնի մօտ՝ ընկղմեցաւ. հրամանատարը, Մէլքէնպուրկի Պրէմերիք դուքսը եւ եօթը նաւազ խղճուեցան: Աւստրիական իֆա փոքր

շողեւնաւը Թրիէսթի նաւահանգստին մէջ ընդհարում մը ունենալով, ընկղմեցաւ նոյնպէս. երեսուն հոգի խղճուած: Պրինտիպի շրջակայքը թաթառ իշխելով, 30 տուններ կործանեց. 40 հոգի մեռան ու 73 հոգի վիրաւորուեցան:

Պրանսայի մէջ ալ, ինչպէս կը հաղորդեն այս առտուան հեռագիրները, հանքային փուլում մը պատահեցաւ. Պոմպէյի մէջ երկաթուղի կառուարումը մը գետը գլորեցրէ. բազմաթիւ զոհեր: Արկաճայից շարժումը:

—Միացեալ Նահանգաց ծովային նախարարը բացորոշապէս կը հերքէ այն լուր, թէ Ամերիկա ծովային պատերազմի մը կը պատրաստուի Սպանիոյ դէմ: Վաշինկթընի ու Մատրիտի կառավարութեանց միջեւ յարաբերութիւնները բարեկամական են միշտ:

—Պրանսայի հին զօրավարներէն՝ Պուրպաքի մեռաւ: 80 տարեկան էր. մասնակցած էր Ալճէրիոյ, Խրիմի ու Իտալիոյ պատերազմներուն: 1870ի պատերազմին ժամանակ իր հրամայած բանակը պարտութիւն մը կրելուն, փորձեց անձնատուան ըլլալ. այդ թուականէն ի վեր, ժողովրդականութիւնը կորսնցուց՝ հակառակ իր փայլուն անցեալին: Հանգստեան կոչուած էր ու քաշուած կապէր գաւառի մը խորը:

—Պրանսայի նախարարաց խորհուրդը որոշեց Ալճէրիոյ կառավարիչ անուանել Վիէնայի դեսպան Պ. Լօզէն՝ Պ. Ժիւլ Բամպօնի տեղ որ կը հրաժարի: Այս առթիւ կարգ մը դեսպանական փոփոխութիւններ պիտի կատարուին:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 25 Սեպտ. — Ժանտատենդը (Թիֆո) ստակապէս կը ճարակի թեաւային թրքական բանակին մէջ: 4000 հրանք զինուորներ թուրքիա դուրսեցան արդէն:

ԼՈՆԾՈՆ, 25 Սեպտ. — Եօրքի դուքսը՝ Կալէսի իշխանին որդին, յառաջիկայ ապրիլին պիտի ստանձնէ Թեքիայի գրահաւորին հրամանատարութիւնը եւ երեք յաճախակի բազկացեալ նաւարումով մը պիտի այցելէ անգլիական գաղթականութիւններու նաւահանգիստները: Այս պատոյս պիտի տեսէ մէկուկէս տարի:

ՏԵՂԱԿԱՆ

Լորտ Է. Լէտի Գրամըր չորեքշաբթի գիշեր Գահրէէ հասան Բօռ-Սայիտի ճամբով: Անգլիոյ դիւանագիտական գործակատարը երէկ Է. առջի օրը բազմաթիւ այցելութիւններ ընդունեց: Այսօր Աղեքսանդրիա կերթայ Բարձր. Խտիվին հետ տեսակցելու:

—Բրէնս Մուհամմէտ Ալի, Խտիվին եղբայրը, յառաջիկայ երկուշաբթի եգիպտոս կը վերադառնայ՝ Մէսսաթըրիի շողեւնաւով: Ի դարձին Լոնտոնէ ուր, Տիգրան փաշայի հետ, ներկայ գտնուած էր Անգլիոյ թագուհւոյն յորդեանի հանդէսներուն եգիպտական կառավարութեան կողմէ, Պրանսա անցուցած էր ամրան քանի մը ամիսները:

—Կալիուպի մէջ անգլիացի զինուորներու քարկոծման դէպքին քննութիւնն աւարտած է. յանցաւորները պիտի դատուին յատկապէս կազմուած դատարանի մը առջեւ որ Կալիուպ պիտի գումարուի:

—Այսօր Ձակագիկի մէջ կարգապահա-

կան ատենի մը առջեւ կը դատուի տեղւոյն ոստիկանութեան մուսալիներ, օգոստ. 31ի գիշերուան ցոյցերու պահուն անփոյթ գտնուած ըլլալուն համար: Նոյն գործողութիւնը պիտի կատարուի նաեւ Ի Սուէզ, ոստիկանութեան քանի մը պաշտօնեայներ դատելու համար:

ՍՈՒՏԱՆԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Թայմզի թղթակիցը Վատի-Հալֆայէն Սուտանի վրայ հետեւեալ շահեկան տեղեկութիւնները ղրկած է իր թերթին:

Ռազմագիտական տեսակէտով՝ Վատի-Հալֆայէն մինչեւ Ապու Համէտ չինուած երկաթուղին աշխարհիս էն կարեւորագոյններէն մէկն է. Նուպիական անապատին այնպիսի մէկ կողմէն կանցնի ուր երբեք մարդու ոտք չէ կոխած:

Ջուրի ամենէն մօտ աղբիւրէն վաթսուն հազարամէթր հեռու, երկրաշափնները կաւէ զտոյներու (զիր) խորհրդաւոր հաւաքածոյ մը գտած են. հնախուզական այս գիւտը տարբեր կարծիքներու տեղի կուտայ:

Պատմութեան մէջ կը յիշուի թէ Պարսկաստանի Կամպիւս թագաւորը երբ Եգիպտոսի տիրեց մեծ բանակ մը ճամբայ հանեց անապատին մէջ խուզարկութիւն մը ընելու համար: Աւելի մօտ ատեններս Խտիվ Իամայիլ փաշա նոյն մտքը 2000 զինուոր ղրկեց որոնք անապատին մէջ անհետացան: Նոյնպէս Սաիտ փաշա անապատին մէջ պտոյտ մը ըրած է փառաւոր կառքով մը որուն ութը ուղտ լծուած էր Է իր այս ճամբորդութիւնը հանդարտ Է հաճելի կերպով կատարելու համար այդ յանդուգն փոխարքան իր բանակին հրամայած էր՝ իր անցնելիք ճանքները ամեն օր ջրել փոշին առաջը առնելու համար:

Անապատին կլիման շատ աւելի հաճելի է քան Նեղոսի ափերու խոնաւ բարեխառնութիւնը: Հոս օդը մաքուր, չոր Է հաճելի կերպով զով է, մինչեւ իսկ առտունները բաւական ցուտ կընէ: Մեր գտնուած տեղը երեք բուրդէ ծածկոցներու պէտք ունիք գիշերը ցուտին դէմ ինքզինքնիս պատապարելու համար:

Ձեզի այս տեղի կլիմային վրայ աւելի որոշ գաղափար մը տալու համար, բաւական է ըսել թէ երկաթուղին համար աշխատող 2000 գործաւորներու մէջ հազիւ 12 հոգի կը գտնուին հիւանդ:

Այս գործաւորներ առատ կերպով կը վարձատրուին Է որեւէ գանգատ չունին ոչ կլիմային Է ոչ ալ իրենց գործին դէմ. ընդհակառակը հաճութեամբ Է գոհացումով մը առաջ կը տանին երկաթուղին գիծը որ օր ըստ օրէ երկարելու վրայ է:

ՍԻԱՄԱԿԱՆ ՀԱՐԵՄՆԵՐԸ

Նորին Սիամական Վեհափառութեան Շուլալօնեքօրնի Եւրոպիոյ մէջ ըրած պտոյտին առթիւ, Սիամի վրայ տրուած տեղեկութիւնները մասնաւոր շահեկանութիւն մը կստանան. Է որովհետեւ երկրի մը վրայ գաղափար կազմելու համար լաւագոյն միջոցը այնտեղի կլինըր ճանչնալն է, ուստի Սիամի հարէմներուն քանի մը տող նուիրել անօգուտ չենք համարիր:

Սիամի մէջ ամեն մէկ մանտարէն, այսինքն ազնուական, իրաւունք ունի տասներ-

կուրքէն մինչեւ քսան, երեսուն կին ունեւնալու (ի՛նչ... համբերութիւն պէտք է ատոր)։

Օրինաւոր կինը առաջին անգամ առածն է, միւսներն ալ թէեւ իր կիներն են՝ բայց ամենքն ալ առաջին կնկան հրամանին տակ պէտք է գտնուին։

Ընդհանրապէս կիները դրամով ծախուկառուին։ 800 ֆրանքէն մինչեւ 1500 ֆր. ծախուածներ կան։ Երկու հազար ֆրանք տուողը հրեշտականման էակ մը կրնայ գնել։

Զարմանալի սովորութիւն մը ունին. առաջին օրինաւոր կինն է որ ինք իր ձեռքովը կընտրէ մնացեալ կիներուն խումբը. (ճշմարիտ քաղաքակրթութիւնը Սիամի մէջ փընտրուելու է եղեր)։ Եւ իր այս ծառայութեան փոխարէն ինքը միայն իրաւունք ունի էրկանը ժառանգութեան տիրանալու, և մի և նոյն ատեն ինքը անվաճառելի կը մնայ— մինչդեռ միւսները սովորական ապրանքի մը պէս կըրնան ծախուիլ։

Շատ մը էրիկներ կան անշուշտ հոս ուրնք զղջացած են... Սիամ ծնած չըլլալուն։

Սիամի թագաւորին համար կըսուի թէ ութ հարիւր կին կը պահէ որոնց մէջ հիւսնալի գեղեցկութեամբ օժտուածներ կան։

Ամեն տարեգլխու մայր-տունար մը կը դնեննորին շագանակագոյն Վեհափառութեան առջեւ որուն մէջ ինքը ձեռքովը կարճանագրէ ամբողջ տարուան մէջ իր կիներէն քանի զաւակ ունեցած ըլլալը։

Հակառակ իր այս անուր բազմակնութեան, այսօր Սիամի թագաւորը միայն եօթանասունը երեք զաւակ ունի, ինչ որ շատ գէշ գաղափար մը կուտայ Նորին վեհափառութեան... որդեւորական կարողութեանը վրայ։

Կերեւայ որ Սիամի մէջ ալ կիները շատ զաւակ ունենալէ չեն պսորթիր, ապա թէ ոչ, ենթադրելով որ ամեն կին կարող է գոնէ երկու տարին անգամ մը զաւակ ունենալ, քանի որ ամեն տարուան ամուսնական կեանքէ մը ետք, այսօր, Շուալունքօրն հազար վեց հարիւր զաւակ տէր ըլլալու էր, թիւ մը որ հաւասար է Սան Մարինոյի հանրապետութեան բնակիչներուն թիւին։

Տ Պ Ա Ր Ա Ն "Փ Ա Ր Ո Ս", Լ Ր Ա Գ Ր Ի

Կ Ը Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Ի Ն
ԱՄԵՆ ԼԵՋՈՒԻ ՇՐՋԱՔԵՐԱԿԱՆ
ՄԱՀԱՉԻ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ
ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ
ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳՆՈՒԻ
Տ Ո Մ Ս Ե Ր

Եզրկատուի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին։

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Այցաբարձերու եւ տոնաւոր
Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ օգոստոսի, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7։

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱԼԵԲՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱՉՈՂԼՈՒ Գ Ա Ն Ի Բ Է

Գնում և վաճառում արժեթուղթերու—
Կանխավճար արժեթուղթերու վրայ— Կատան-
ձեէ յաճախորդներու հաշոյն համար գան-
ձումներ ընել Եզրկատուի և արտադրողների
գլխաւոր քաղաքներու մէջ— Պայմանաժամա-
ւոր վաճառում ամեն տեսակ պարզեւարար
արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով։

Սկզբի ժամրաման տեղեկութեանց համար զի-
մել Պուրպ փողայ Եզրկատուի հետադրոտուն գէտ
Բէմազօղլու դրամատունը։

ՀՐԱՆՏ ԱՋԱՏԵԱՆ ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Էօզլէքիյէ, հայկական պանդոկին քովըն-
տի կամարակապ փողոյը բացած խանութին
մէջ ամենէն դժուարահաճները գոհացնելու
եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սո-
վորական գինեւոր։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻՆԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵԲՍԱՆԳՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3,4	Օմնիպ. 1,2,3,4	Կէս ուղ. 1,2,3,4	Օմնիպ. 1,2,3,4	Էքսպրէս 1, 2 4	Օմնիպ. 1,2,3,4	Էքսպրէս 1, 2 4	Օմնիպիւս 1 2 3 Կարգ	
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	երեկ. 3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15	երեկ. 11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	առտ. 12 35
Թանթա	ժամ. 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	» 3 10	երեկոյ 7 34	9 41	երեկ. 12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիա	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	երեկոյ 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵԲՍԱՆԳՐԻՈՅԷ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Օմնիպ. 1,2,3,4	Կէս ուղ. 1,2,3,4	Օմնիպ. 1,2,3,4	Էքսպրէս 1 2 4	Խառն առտ.	Օմնիպ. 1,2,3,4	Էքսպրէս 1 2 4	Օմնիպիւս 1 2 3 Կարգ	
Աղեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	առտ. 9 20	երեկ. 2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15	երեկ. 11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	երեկ. 12 14	4 13	5 15	8 6	առտ. 1 9
Թանթա	ժամ. —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ. 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՒՈՏ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՒՈՏ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	ժամ. 12 28	7 48	» կայարան	» —	3 30
	մեկ. 12 33	7 53	Իսմաիլիա	» 1 20	7 5
Ջակաղիկ	ժամ. 1 34	8 54	Ջակաղիկ	ժամ. 3 7	8 53
	մեկ. 1 44	9 4		մեկ. 3 17	9 3
Իսմաիլիա	մեկ. 3 40	1 —	Պէնհա	ժամ. 4 13	9 47
Սիւէզ կայարան	ժամ. —	5 —		մեկ. 4 17	9 4
Տօք (քարափ)	ժամ. 6 55	—	Գահիրէ	ժամ. 5 5	10 35